ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Գ Լ Ո Ւ Խ 12

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հոդված 64. Ավելացված արժեքի հարկից ազատված գործարքներն ու գործառնությունները

1. ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է:

2. ԱԱՀ-ից ազատվում են Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հետևյալ գործարքներն ու գործառնությունները.

53) Հայաստանի Հանրապետությունում աճեցված տոհմային կենդանի խոշոր եղջերավոր անասունների օտարումը Հայաստանի Հանրապետության տարածքում:

54)

«55) տիեզերական օբյեկտների և տեխնիկայի օտարումը, դրանց վերանորոգման կամ արդիականացման, երկրի հեռակա դիտարկման արբանյակային տվյալների հաղորդման, մշակման, տիեզերական օբյեկտների արձակման, վայրէջքի և թռիչքի ընթացքում դրանց կառավարման ծառայությունների մատուցումը և (կամ) աշխատանքների կատարումը՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը:»:

(64-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, խմբ. 08.02.18 ՀՕ-124-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն, լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն, 19.06.19 ՀՕ-87-Ն)

(64-րդ հոդվածի 2-րդ մասի 30-րդ և 54-րդ կետերը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 18-րդ հոդվածի 2, 3-րդ կետերի փոփոխություններով ուժի մեջ կմտնեն 01.01.2020-ին)

(07.06.19 ՀՕ-63-Ն օրենքի 1-ին հոդվածով լրացված 64-րդ հոդվածի 2-րդ մասի 52-րդ կետը գործում է մինչև 2022 թվականի հունվարի 1-ը՝ համաձայն 07.06.19 ՀՕ-63-Ն-ի 2-րդ հոդվածի)

Հոդված 108. Եկամուտ չհամարվող տարրերը

1. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ չեն համարվում՝

«19) տիեզերական օբյեկտների և տեխնիկայի օտարման, դրանց վերանորոգման կամ արդիականացման, երկրի հեռակա դիտարկման արբանյակային տվյալների հաղորդման, մշակման, տիեզերական օբյեկտների արձակման, վայրէջքի և թռիչքի ընթացքում դրանց կառավարման ծառայությունների մատուցման և (կամ) աշխատանքների կատարման գործունեությունից ստացվող եկամուտները՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը:»:

Հոդված 112. Ծախս չհամարվող տարրերը

1. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար ծախս չեն համարվում՝

«14) տիեզերական օբյեկտների և տեխնիկայի օտարման, դրանց վերանորոգման կամ արդիականացման, երկրի հեռակա դիտարկման արբանյակային տվյալների հաղորդման, մշակման, տիեզերական օբյեկտների արձակման, վայրէջքի և թռիչքի ընթացքում դրանց կառավարման ծառայությունների մատուցման և (կամ) աշխատանքների կատարման գործունեության գծով կատարվող ծախսերը՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը:>